ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբեր 2022թ. ՆՄՈ/76-2022

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2110-Ն որոշման պահանջները, «Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության հաշվապահներին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Ս. Թովմասյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

VERIFIED OCSP 03.02.2022 15:33:25 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505